

Ներսէս Ծնորհալիի դիմագիծ մ'ընծայել դժուարին աշխատանք մըն է: Զուարթադէմ եւ յստակատես իր խառնուածքով, լուսամիտ եւ թափանցիկ իր նկարագրով, բնութեամբ պարզուղիղ եւ հեղահամբոյր, կը մօտենայ մեղի ժպտուն եւ գոհունակ՝ բերելով իր հմայքը, իր մեծութիւնը եւ սրբութիւնը, ու մանաւանդ իր շնորհք՝ անձնաւորութեամբ, իբր քաղցրութեան եւ խանդակաթ գործով լուսածիրով պըսակուած սիրոյ ճառագայթ մը, դուրեւելու եւ երջանկացնելու համար. կարծես հինաւորաց նահապետ մ'ըլլար՝ երկնային բարիքներ պարգեւող, եւ կամ դարերու ոգին, որ ամէն մէկ դարէ իր քաղած շնորհքներով բեռնաւոր, կու գայ բաշխելու ամէնուս: Մեր անձը կապուած է իրեն, տեսնելով իր մէջ ծագումը ազգին ամէնէն հարազատ ու անարատ կեանքին, որով մեր ցեղի պայծառ իմացականութիւնը, սրտի եւ զգացումներու ազնուութիւնը եւ նրբութիւնը բիւրեղացած՝ լուսաստեղծութեամբ են իր մէջ. նմանապէս մեր տոհմային յատկութիւններէն բարութիւնը, լընութիւնը, պարկեշտութիւնը, բարոյական գիտակցութիւնը իր մէջ մարմնացած ապրումներ կ'ըլլան զմայլելի արդիւնքներով: Իսկ գաղափարին լոյսը, որով լեցուած է, բնաւորապէս կ'ուղղէ իր միտքը անստուեր լոյսին, ու ասով հրաւիրու, ներքին բոցակիզում մը կը խարուկէ իր բովանդակ էութիւնը, ծնունդ տալով գերազոյն ուրախութեան մը՝ ծրարութեամբ իր հոգւոյն մէջ, հեռու աչքերէ եւ հպումներէ, իբր թէ ըլլար Միսքիֆ ճաճանչ մը, եւ կամ անհուն սիրոյ երգ մը, բղխած իր մէջ կազմուած հոգեկան վիճակէն:

Ամէն օր Ծնորհալի այս տրամադրութեամբ եւ հոգիով կը լծուի իր հովուական աշխատանքին, ու իր աչքերուն կ'երեւութանայ հորիզոն մը միշտ աւելի ընդարձակուած եւ ուր թեւածող հոգիներ, խումբ խումբ կը փարին իր հովանիին: Ինքնամոփոփ եւ զգուշաւոր, անայլայլ եւ աստուածաբեալ, աննկուն՝ դժուարութեանց եւ անակընկալներու առջեւ, լիայոյս երկնային օթանդակութեան վրայ, ձեռնամուխ կ'ըլլայ իր պաշտօնին ու կը նկատէ իրեն յանձնուած ժողո-

վուրդը սրբազնութիւն մը, թանկագին աւանդ մը՝ առհաւատչեայ յաւիտենականութեան՝ իր մէջ ալ կեանք ու յաւիտենականութիւն զուգընթաց կ'արշաւեն, նոր տեսիլներու եւ բարութեանց հեռանկարով:

Այդ տարիներուն, այն է ԺԲ. դարու երկրորդ կէսին, հայ պատմութեան մէջ ծայր կու տայ եկեղեցական եւ ուսումնական կեանքի վերադարձում մը, երբ մանաւանդ կաթողիկոսական աթոռը կը փոխադրուի Ծովք ու ապա Հոռմկլայ: Մեր պատմիչները այդ գործունէութեան ազդող ու կատարելագործող կը ներկայացնեն գլխաւորապէս Ներսէս Ծնորհալի, որու համբաւը իբր գիտնական եւ սրբալեաց անձի, կը հասնի մինչեւ Բիւզանդիոնի արքունիքը, որ հիացումով կ'արտայայտուի անոր նկատմամբ, լսելով իր զրկած նուիրակներուն տեղեկատուութիւնը: Գրիգոր Բ. Վկայասէրի կաթողիկոսութեան շրջանին (1065-1105) արդէն սկսած էր գրական շարժում մը, սակայն Գր. Գ. Պահլաւունի եւ Ներսէս Ծնորհալիի գահակալութեան շրջանին ոչ միայն աւելի կը զարգանայ, այլ կ'ընդհանրանայ գրական վերածաղկումը, ու աւելի ալ յայտնի են կատարուած աշխատանքին տարողութիւնը ինչպէս նաեւ արդիւնքները:

Ծնորհալի ամէնէն առաջ նուիրեալ մըն է իր եկեղեցական վիճակէն ծագած պաշտօնի գործին, այսինքն ըլլալ հովուապետ ժողովուրդին, նախ իբր աշակից եւ գահակից իր եղբօր, ու ասոր մահէն յետոյ գահակալ՝ Եօթնեակ մը տարիներ, բայց գործնականապէս բոլորելով ամէնը միասին յիմնամեայ մը, եւ կը դառնայ դարուն տիրող եւ ազդեցիկ դէմքերէն մէկը: Եկեղեցականի իր պարզունակ կեանքը ոչ մէկ հանդիսաւորութիւն ցոյց կու տայ, սակայն որոշակի կը նկատուի թէ ամբողջապէս յարած է ժողովուրդը խնամարկելու գործին, անդու եւ յոգնատանջ աշխատանքով: Իր նպատակն է բարեւաւել ու բարձրացնել ընկերային բոլոր խաւերուն վիճակը անխրտիւ: Այս կատարուած աշխատանքը իր ծաւալով ու արդիւնքներով, մարդկային տեսութեամբ՝ կ'ընծայէ իր դիմագիծին վեհութիւն եւ սրբութեան լուսապսակը, եւ անձին՝ զոհադրածման դիւցազնութիւնը: Միտք մը, նպատակ ունենալով վերապրեցնել հայ ցեղային անարատ հոգին ժողովուրդին մէջ, թափանցող դարերու պատմական կեանքին մէջ, քննող դէպքերուն եւ իրերուն մէջ քողարկուած նշանակութիւնը, նկատելով նաեւ ժամանակին ու պարագաներուն հանդամանքները, աներկիւղ ու առանց վհատելու կը խորհի վերակենդանացնել ինչ որ արժէքաւոր է, ինչ որ հոգեկան հարստութիւն է, սրբազան, գեղեցիկ, ճողոպրած դարերու կատարած աւերներէն:

Անշուշտ իբր մարդ՝ Ծնորհալի կ'ապրի իր դարուն կեանքը, կրելով նաեւ անոր ազդեցութիւնը: Յաւազնոտ դար մը, մասնաւորապէս ազգային պատմութեան համար. սակայն անհնարին չէ որ մերթ անձ

մը յաջողի ներդրածել այնպէս ժամանակի հոսանքին եւ պայմաններուն վրայ, ու իր իմաստուն գործունէութեամբ եւ նկարագրի կորովով ընծայել դարուն իր անձնականութեան դրոշմը, որով պարգեւել տարբեր ձեւաւորում մը՝ կենսունակ եւ չէնչող՝ 1123-1173ի շրջանը յայտնապէս այս տեսութեամբ կը ներկայանայ, զարթօնքի ու վերածնունդի շարունակեալ շրջան մը, կրօնական եւ ուսումնական տեսակէտով, ու աթոռանիստ Հռոմկլայ կ'ըլլայ ակութիւն կըրթական եւ գիտական այդ շարժումին: Նոյնիսկ արեւելեան Հայքէն վարդապետներ Շնորհալիի կը դիմեն լուսաւորութեան համար: Դարուն մեր պատմագիրները սքանչացումով եւ գովեստով կը խօսին իմացական եւ գրական այս գործունէութեան մասին:

Ութհարիւր տարի վերջ երբ նկատենք Շնորհալիին իր այս կըղզիացած բնակավայրին մէջ, մասնաւորապէս Հռոմկլայի առանձնաբանին մէջ, պէտք ենք խորհիլ թէ այդ վայրերն ալ ապահովապէս ազդած են իր մտքին եւ խառնուածքին վրայ: Գլխաւորապէս Հռոմկլայ, այդ յետ-ջրհեղեղեան լեռներու եւ ժայռերու ցցուն միջնաբերդը, իր խորափիտ գահաւանդներով եւ ահարկու լեռնակողերով, գեղեցկութիւն մը վայրագ՝ բայց մեծաշուք, մերթ պայծառ եւ շողշողուն, բոցավառ արեւու ճառագայթներով, մերթ մռայլ եւ ստուերամած մթութիւններէ թխացած, իբր խաւարի եւ լոյսի ալեծածան ծով մ'ըլլար, միշտ ալ չքեղաշուք՝ արեւու հրկիզումով: Հրաշագեղ տեսիլ մը բնութեան, բայց նաեւ խռովայոյզ, որով կը հրաւիրէ մարդս ներանձնանալու եւ խորհրդածելու, անսահման ոյժի մը շունչէն ընդհարուած: Շնորհալիի դիտող եւ սիրող հոգի, նկատած պիտի ըլլայ այդ քառասյին զանգուածը իբր գերազօր խորհուրդ մը, որ փոխանակ ահաբեկելու, կրնայ սիրոյ ալ մղել, եւ փրկանաւորել մարդկային միտքը նիւթի կապանքներէն, եւ ուղղել անստուեր լոյսին: Ինչպէս նաեւ կրնայ առաջնորդել անսահման գեղեցկութեան, ու այս ճամբով ստեղծել եղբայրակցութիւն մը, եթէ ոչ սիրալիր, գոնէ ծագած հիացումէ: Իսկ բնութիւնն ալ քերթող Շնորհալիի մէջ մարմին կը ստանայ իր գոյներով ու գեղով, ձեւով մը մարդկայնացած՝ բանաստեղծին խօսքին միջոցաւ:

Այսպէս Շնորհալիի միայնացած պիտի ըլլայ Հռոմկլայի կաթողիկոսարանին մէջ, բեռնաւոր մարդկային խեղճութեամբ, որու ըմբռնումը ունի, բայց այլուստ առի է սիրով ու քաղցրութեամբ, ինչ որ իր կենցաղին հոգին կը կազմէ. դարձեալ փառապանծ է իր գիտական հմտութիւնը եւ իմաստութեան լոյսը, սիրած բովանդակ հայ կեդրոններու մէջ. իսկ իր վարչական ուղղութիւնը՝ ներհուն եւ փափկանկատ: Իր համբաւը յափշտակած է ամէնուն սիրտը եւ կ'ունկընդերն իր խօսքը զգօն հլութեամբ՝ նոյնիսկ հեռաւոր գաւառներու մէջ: Անձին սրբութիւնը կը պարգեւէ օծում մը ոչ միայն իր ներքին

կեանքին, այլ նաեւ իր խօսքին եւ գրութիւններուն, եւ ունի թովհական ոյժ առինքնելու հոգիները: Հռոմկլայ դարձեալ վկայել կուտայ իրեն, թէ այդ բարձունքին վրայ ինքը պատգամատու մըն է, սահմանուած՝ առաջնորդը եւ լուսատուն ըլլալու իրեն դիմողներուն. միայնութիւնն ալ կարծես աւելի զգայուն եւ բուռն կը դարձնէ իր անձուկը եւ յարումը ժողովուրդին:

Սակայն Շնորհալիի միայն իր ապրած դարուն մարդը կարելի չէ նկատել. ինքը կը պատկանի մեր մշակոյթի բոլոր դարերուն իր հմտութեամբ, դիտական մակարդակով, իր հեղինակութիւններով, իր կաթողիկոսական գործունէութեամբ, ժողովուրդի կեանքին եւ վիճակին իր ընծայած արժէքաւորումով: Կեանքի ամբողջութիւնն ալ կ'ընձեռէ կաթողիկոսական իշխանութեան, իր վեհափառ եղբօր տարիներէն սկսելով, հեղինակութիւն եւ գերազանցութիւն: Հովուապետ ու առաջնորդ՝ կը նուիրուի ժողովուրդին հոգեւոր ու բարոյական բարձրացումին, չանտեսելով կատարել նաեւ կարեւոր բարենորոգումներ եկեղեցական մարդին մէջ: Կը ճոխացնէ հայ Եկեղեցւոյ Աղօթմատեանը մասնաւորապէս շարականներով ու հոգեւոր երգերով, կը կարգաւորէ պաշտամունքի եւ ծէսի արարողութիւնները՝ վերատեսնելով անոնց կազմը եւ կատարելով յաւելումներ: Երբ նկատողութեան առնուի այս ամէնը, յայտնապէս պիտի նշմարուի կատարուած աշխատանքին բազմամասն ըլլալը եւ լրջութիւնը, ինչպէս նաեւ իր բարեգարդելու նպատակը: Ասոնք կը ստիպեն քննող միտք մը խորհելու, թէ կը գտնուի անձի մը առջեւ, որ ցոյց կու տայ օժտւած ըլլալ ոչ միայն այլազան բարձր կարողութիւններով, այլ գուցէ լուսաւոր գործնական հանճարով: Ընդհանրապէս պարզ տաղանդաւոր անձին կը պակսի անհրաժեշտ զօրութիւնը ստեղծագործելու, եւ միաժամանակ զանազանեալ աշխատանքներ իրականացնելու. այս կարողութիւնը կ'ենթադրէ անձին մէջ հանճարեղ տաղանդ մը, որ օժտուած ըլլայ նաեւ հաւասարակշիռ մտքով եւ զգայնութեամբ: Հանճարը կը պահանջէ նաեւ պարզութիւն միացած համադրութեան, այլեւայլ տարրերու եւ մասերու նկարէն զուգադրութեամբ միակ պատկերի մը մէջ: Շնորհալիի մէջ շատ յայտնի կը նկատուի պարողութեան հետ այս համադրութիւնը, նոյնիսկ իրարու անհաղորդ կամ հակադիր գաղափարներու եւ իրերու մէջ, միշտ ալ յստակօրէն ըմբռնելի. ներկայացուած այդ համադրութիւնը շատ աւելի զգալի է բնականին ու գերբնականին իրարու հաղորդակցութեան մէջ, որ մերթ կրնայ բարձրանալ խորհուրդի ներկայութեան՝ փնտռուած բանաստեղծէն:

Իսկ իր միտքը, լուսաւոր եւ սրատես, ծանօթ է կատարելապէս դարուն առկայ գիտելիքի բոլոր մասերուն, մանաւանդ սրբազան, ընկերային, պատմական տեսակէտով, ինչպէս ըսուեցաւ. ունի սա-

կայն գաղափարական մը եւ գուցէ կազմած է ծրագիր մը, ու այս ուղղութեամբ ալ կը ջանայ առաջնորդել իր հօտը, ազդելով անոնց ըմբռնումներուն եւ ձգտումներուն վրայ: Յետոյ կ'օգտագործէ ամէն ինչ, սկսեալ ամէնէն սովորականներէն. տուն մը կը կառուցուի աղիւսներով, ու ինքը հակամէտ է նուաստ իրերու մէջ ալ տեսնել գեղեցկութիւն մը: Այս բոլորին հետ նկատել դարձեալ իր մտքի տեսութեանց բացուիլը աւելի ընդարձակ հորիզոններու վրայ: Նոյն տարիներուն կը խօսուէր Քրիստոնեայ այլեւայլ եկեղեցիներու իրարու հետ եղբայրակցական միութիւն մը վերակազմելու հարցին շուրջ, Շնորհալիի սրտին շատ սիրելի հարց մը: Իբր ուղղիչ սկզբունք կամ կանոն ընդունելով պահել անխախտ հաւատքի հիմնական կէտերը, կը ձգտէր ստեղծել փոխադարձ հաշտարար սիրոյ եւ զիջողութեան համագործակցութիւն մը, Աւետարանի հոգւոյն վրայ հիմնուած. իսկ ծիսական ու բարեկարգական նիւթերու արմատական հանգամանք չընծայել: Այս խնդիրին մէջ Շնորհալիի անհատական հեղինակութիւնը կրնար ծանրակշիռ դեր մը կատարել. սակայն իր վաղահաս մահը չի թոյլատրեր որ հարցը գտնէ իր լուծումը. գուցէ իր սրտին ամենամօտիկ փափաքներէն էր այդ միութիւնը:

Ամէնուն ծանօթ է Շնորհալիի գրական այլազան գործունէութիւնը: Երբ իր հեղինակութիւնները առանձին առանձին քննութեան առնուին, գուցէ չնշարուի իւրաքանչիւրին մէջ կատարի մը բարձրութիւնը: Բայց եթէ ամէնը իրարու միազուգումով նկատուի, պիտի նշարուի հեղինակին մէջ անսպառ եւ զօրաւոր կարողութիւն մը, յաջողելով թէ՛ լուրջ ու երկարաձիգ կտորներու մէջ եւ թէ՛ նուաստ համարուած ամփոփ եւ ընտանի գրութիւններու մէջ, ցոյց տալով մտքի ճկունութիւն եւ նիւթին յարմար գրական կատարելութիւն: Յետոյ միշտ ամուր պահպանուած է հեղինակին նկարագիրը, ոճին շնորհաւորումը, ոտանաւորին վայելչութիւնը եւ ներդաշնակութիւնը: Իսկ հոգեւոր երգերու եւ տաղերու մէջ Շնորհալիի անձը քնար եւ կամ տաւիղ մըն է, ու իր յօրինած երգը կարելի չէ շփոթել ուրիշներու հետ: Այս տեսակէտով Շնորհալի ինքն է, ուրիշի չի հետեւիր, չի ալ կրնար հետեւիլ. անձին յատուկ բարեմասնութիւնները խմբուած են իր մէջ առանձնակ խառնուածքով՝ լոկ իրեն պատկանող: Սակայն անկարող չէ յարմարել ժամանակին, միջավայրին ու հոգեկան պահանջներու, բաւ է որ չարգիլեն հասնիլ նախակարգեալ նպատակին:

Կաթողիկոսական գործունէութեամբ Շնորհալի իր շօշափած նիւթին մասնագիտական եւ լրիւ ներկայացումով չի կորսնցներ իր անձնաւորած շնորհները՝ սէր, գորով, քաղցրութիւն, ազնուութիւն ու ասոնց անոյշ զեղումը. այս պարագային իր հայրական դիմագիծը կը ստանայ նաեւ աւելի մտերմիկ ընտանութիւն մը հանդէպ ամէնուն. խօսք մը կամ յորդոր մը չէ որ կ'ուղղէ իր զաւակներուն, այլ

իր սիրտն է որ կը բաշխէ, միացուցած լոյսի ճառագայթի մը՝ ջերմացնելու համար: Ինքը կ'ապրի իրեն համար կազմած երկնքի մը կամարին ներքեւ, եւ կը ջանայ ստեղծել տալ երկինք մը նաեւ իր որդիներուն ալ. երկնքի կարօտը ունի իբր իր գերագոյն հարստութիւնը: Իր հովանին համապարփակ է ինչպէս իր սէրը, ու այս տարածականութիւնը իր գոհունակութիւնը կը կազմէ: Միշտ անվրդով, ու զուարթութեան փայլ մը դէմքին վրայ, արտայայտիչ իր հոգեպէս երջանիկ ըլլալուն: Բայց իրականին մէջ մտատանջութիւն, ցաւեր, հոգեկան եւ նիւթական տառապանքներ անպակաս չեղան, ու ասոնց աւելցան հայրենի երկրին եւ բնավայրին ահաւոր աւերումները. սակայն իրեն ալ չի պակսիր իր երկնքին մէջ կապոյտ անկիւն մը, ուր կ'առանձնանայ եւ ուր կ'երեւնայ իրեն իր յոյսերուն վերածաղկումը. այս տեսակէտով իր կեանքը ծաղկաւէտ հրաշալի բողբոջում մըն է, ու կարելի չէ չնկատել ու չհիանալ իր ցոյց տուած այս անվեհեր եւ անտրտուն վերաբերումին վրայ, մանաւանդ երբ վերջիչեք երկրին աւերումներէն ծագած սարսափը. այդ վերաբերումը կը յիշեցնէ տեսանող հոգիներու դիմագիծը՝ անյողդողդ եւ համակամ՝ խոստացուած յաղթանակին վստահ: Զոհաբերուած անձ մըն է այլազան կեանքեր իր մէջ կրող, բայց խառնուածք, նկարագիր, բնութիւն միշտ անփոփոխ կը յայտնաբերուին: Իրերը տեսնելու եւ ապրումի եղանակին հետ նկատել նաեւ իր մէջ ստեղծագործող ոյժը, նորութիւններ հնարելով եւ ջանալով զուգընթանալ ժամանակին պայմաններուն եւ միաժամանակ օգտագործել ամէն ինչ: Բարդ հոգի մը՝ իր գործունէութեամբ, բայց արմատապէս զտարիւն, յստակ, ներդաշնակ, ու բարեյարմար իր մտքին եւ ներքին զգացումներուն հետ, միշտ պայծառ ամբողջապէս եւ միշտ թափանցող խորհրդաւոր անկիւններ՝ լուսաւորելու համար. ինքն իր մէջ ինքնատիպ նկարագիր մը:

Այս ամէնը նշան է զօրաւոր եւ բեղնաւոր մտքի մը. սիրող գիտութեան եւ զարգացման ու ձգտող գիտական նորութեանց իմացողութեան: Սակայն գիտակցօրէն նաեւ աւանդապահ է եւ հետագոտող հնաւանդ սովորութեանց: Խորապէս ճանաչող վարդապետական տեսութեանց ու անոնց բանաձեւումներուն, կը փնտռէ լոկ ճշմարտութեան իսկութիւնը: Միշտ կը զգայ կարօտը հաւատքին եւ շնորհքին, ու իր գոյութեան ապրումը անոնց մէջ կը գտնէ իր ընտանի մթնոլորտը: Իր կեանքն ալ ընդունեցաւ արդէն իբր սպասարկութիւն մը. եւ Շնորհալի այս նկարագրով կնքուած կը ներկայանայ մեզի, եւ իրականացնելու համար այս նախասահմանումը, կը զգայ հարկը ողակիզուելու բոլորանուէր. արդէն իր վիճակին ընտրութիւնը կ'առաջնորդէր զինքը ասոր. հովուել, սրբակերտել իրեն յանձնուած ժողովուրդը ու բարեբարել: Շառաւիղ ներսէս ու Սահակ Պարթեւ հայ-

րապետներու եւ ժառանգորդ անոնց իմացական լոյսին եւ հողեկան աշխարհին, չնկատեց հայ Եկեղեցին կղզի մը ծովերու ուղիքներին մէջ, ու փափաքեցաւ ընդարձակել անոր ափերը եւ հորիզոնները իր սիրոյ ողջագործումով եւ ճշմարտութեան գրկախառնումով, ինչպէս նաեւ ընծայել հայ Եկեղեցւոյ դարերու կենսունակութեամբ եւ լոյսով ուժեղացած դիմագիծ մը:

Այսօր իր յիշատակով Հոռմկլայ կը ներկայանայ մեզի լուսափայլ ամպերու հովանիով շքեղացած. թէեւ քանդուած ու աւերակ, բայց մեր պատմական կեանքին համար ստացած է նուիրականութիւն մը եւ նկատուած սխրալի նշխար մը Շնորհալիի գործունէութեան: Բնութիւնը անմերձենալի ըրած էր, որպէսզի չպղծուի. դըժբախտաբար բարբարոս ձեռքեր կարծեցին ոչնչացնել: Սակայն այսօր ալ, ութ հարիւր տարիներ յետոյ, կը մնայ աղբային յիշատակարան եւ մեծութիւն մը, խորհրդանշը մեծ Հայրապետին ինքնութեան եւ գործին, և ուր իր խօսքը, իր երգը ու աղօթքը՝ թէեւ քարացած, բայց խօսուն վկաներն են իր զոհադործումին, եւ դարերու պայծառութեամբ ու ոգեղինութեամբ ճոխացած՝ կ'ընծայեն իր դէմքին անսրութիւն եւ անմահութիւն:

Հ. Կ. ՔԻՊԱՐԵԱՆ

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐԱՆԱՑ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ.

ԱՍԱՑԵԱԼ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ՝ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Աւետարանի Տաւր խորաններու ծաղկումներուն մեկնութեան աշխատութիւն մը կայ՝ որ կը գտնենք Ներսէս Շնորհալիէ սկսուած եւ կիսաւարտ թողուած՝ 1825ին Կ. Պոլիս հրատարակուած «Մատթէոսի Մեկնութեան» սկիզբը: Նոյնին աշխարհաբար թարգմանութիւնը հրատարակեց Գարեգին Սալապուրեան Պատրիարք Կ. Պոլսոյ՝ Շաղակաթ պարբերականի 1952 Հոկտ.-Նոյմ. միացեալ թիւին մէջ (էջ 290-296): Հանգուցեալ Պատրիարքը դժբախտաբար չէ նշանակած թէ ի՞նչ բնագիծ ըրած է իր թարգմանութիւնը: Ան կը բաւականաւայ ըսելով որ «Ներսէս Շնորհալիի Մատթէոսի մեկնութեան սկիզբը գրուած կայ այս խորաններուն եւս մեկնաբանութիւնը, զոր թարգմանաբար կու տանք Շաղակաթի ընթերցողներուն»:

«Շնորհալիի աւետարանական մեկնութիւնը կը հասնի մինչեւ Ե. (5) գլուխ, 17 համար: Մնացածը գործն է Յովհաննէս Երզնկացիի, Ծործորեցի եւ Պլուզ եւս կոչուած (ԺԳ. դար): Խորաններուն մեկնութիւնը, կը թուի, թէ Երզնկացիին եղած ըլլայ, նկատի առնելով նոյն իսկ լեզուն» (անդ, էջ 290):

Նախ ճշտենք որ Յովհաննէս Երզնկացիներ՝ Ծործորեցի եւ Պլուզ, երկու տարբեր անձեր են, թէեւ միշտ իրարու հետ նոյնացուած եւ մէկ անձ նկատուած, մինչեւ որ առաջին անգամ ըլլալով երկար ուսումնասիրութեամբ ճշտեցինք մեր «Երիզա եւ Եկեղեցաց Գաւառ» գործին Ա. հատորին մէջ (Ս. Ղազար, 1953, էջ 168-224 եւ 236-253):

Մատթէի Աւետարանին Մեկնութեան ձեռք զարկաւ Ներսէս Շնորհալի եւ սակայն աշխատութիւնը անաւարտ մնաց: Տարակոյս չկայ որ Յովհաննէս Երզնկացի-Ծործորեցին է որ այդ անաւարտ մեկնողական գործը աւարտեց եւ ո՛չ թէ Յովհաննէս Երզնկացի Պլուզը: Յովհաննէս Երզնկացի-Ծործորեցին թողուցած է հեղինակի յիշատակարան մը՝ ուր յստակօրէն կը հաստատէ ատիկա՝ ըսելով. «Թէպէտ ոմանք նախ քան զմեզ ձեռնարկեցին գրել ի վերայ շարագրութեան